«ԼՐԱԲԵՐԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը «Լրաբերի» («Տեղեկագիր») հրատարակության 30-ամյակի կապակցությամբ ջերմորեն ողջունում ու շնորհավորում է ակադեմիական ավագագույն պարբերականի խմբագրության բոլոր աշխատողներին, հեղինակներին և ընթերցողներին:

«Լրաբերը» («Տեղեկագիր») անցած երեք տասնամյակներում լույս ընծայած իր 336 համարներով կարևոր դեր է կատարել Սովետական Հայաստանում հասարակական գիտությունների բոլոր բնագավառների զարգացման, հայ հասարակական մտքի՝ պատմության ու գրականության, լեզվի ու արվեստի, փիլիսոփայության ու արևելագիտության, հնագիտության ու տնտեսագիտության բազմազան հանգուցային հարցերի գիտական լուսաբանման, հայագիտության արմատական պրոբլեմները մարքսիստական-լենինյան տեսության ոգով արծարծելու ուղղությամբ: Ամսագիրը պարբերաբար լուսաբանել է հայ ժողովրդի անցած պատմական ուղին, ընդհանրացրել Հայաստանում սոցիալիստական շինարարության հարուստ փորձը, արտացոլել սովետահայ մշակույթի ու ժողովրդական տնտեսության վերելքն անցած տասնամյակներում, այն պայքարը, որ մղել է հայ ժողովուրդն ազգային ազատագրության, սովետական կարգերի հաղթանակի ու ամրապնդման, կոմունիզմի կառուցման համար:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների ամսագիրն իր գոյության չորրորդ տասնամյակն է թևակոխում մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդն, ամփոփելով Սովետական Հայաստանի կեսդարյա նվաճումները, չտեսնված խանդավառությամբ համաժողովրդական պայքար է ծավալում կոմունիզմի կառուցման, տնտեսության ու մշակույթի նոր վերելքի համար: Ամսագրի պատվավոր խնդիրն է այսուհետև ևս նպաստել հանրապետությունում հասարակական մտքի հետագա զարգացմանը, մարքս-լենինյան ուսմունքի ոգով արտացոլել հայ ժողովրդի անցած դարավոր ուղին, գիտական խորությամբ ու համակողմանի լուսաբանել հայագիտական պրոբլեմները, հասարակության զարգացման օրինաչափությունները, կոմունիստական շինարարության հարուստ փորձը, հայ ժողովրդի պայքարը սոցիալիստական հայ մշակույթի ու տնտեսության հետագա վերելքի համար: Ամսագիրն իր առջև դրված խնդիրները հաջողությամբ կկատարի համախմբելով սովետահայ գիտնականներին, ապահովելով նրանց արդյունավետ աշխատակցությունն ամսագրին, շարունակ բարձրացնելով հրատարակվող նյութերի գիտական ու տեսական մակարդակը, պատշաճ խորությամբ լուսաբանելով հայ մշակույթի առանցքային հարցերը:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը խորը համոզմունք է հայտնում, որ «Լրաբերի» խմբագրությունը և ամսագրին աշխատակցող գիտաշխատողներն այսուհետև ևս կշարունակեն արժանի ավանդ ներդնել մեր հանրապետությունում հասարակական գիտությունների հետագա զարգացման գործում, հաջողությամբ կդիմավորեն ՍՄԿԿ *XXIV* համագումարը, կնպաստեն այն խնդիրների անշեղ կենսագործմանը, որոնց համար պայքարում է Սովետական Հայաստանի ամբողջ աշխատավորությունը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ